«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

ՈՐՈՇՈՒՄ N 6
18 դեկտեմբերի 2019 թվականի

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, գնահատման և մշտադիտարկման կարգը» հաստատելու և գիտական խորհրդի՝ 2018 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մագիստրոսական կրթական ծրագրերի մշակման պահանջները» և «Մագիստրոսական կրթական ծրագրի և դասընթացի ծրագրերի ձևաչափերի լրացման մեթոդաբանությունը» ուժը կորցրած ճանաչելու մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի N 1718-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17-րդ կետի 8-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, գնահատման և մշտադիտարկման կարգը» (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2018 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մագիստրոսական կրթական ծրագրերի մշակման պահանջները»:

3. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2018 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Մագիստրոսական կրթական ծրագրի և դասընթացի ծրագրերի ձևաչափերի լրացման մեթոդաբանությունը»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2019 թ. դեկտեմբերի 18
Երևան